ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

2022-2023 ուստարի

2022-2023 ուստարում Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում կրթության որակի ապահովման գործընթացներն իրականացվել են՝ համաձայն նախապես հաստատված տարեկան աշխատանքային պլանի:

Ուստարվա ընթացքում մշակվել են գնահատման, մշտադիտարկման մի շարք գործիքներ, որոնք ակտիվ կիրառվել են տարբեր ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

Ուստարվա մեկնարկին իրականացվել է հարցում դասավանդողների շրջանում՝ պարզելու վերջիններիս բավարարվածությունն իրենց աշխատանքային պայմաններից, տրամադրված ռեսուրսներից և աջակցությունից: Հարցման արդյունքների ամփոփումն իրականացվել է դասավանդող թիմի հետ հանդիպումների ընթացքում: Վերջիններս ընդհանուր առմամբ գոհ են վերոնշյալ պայմաններից: Հարկ է նշել, որ նրանց մտահոգող հարցերից մեկը, այն է՝ տեսացրիչների քանակը, արդեն բարելավվել է, իսկ դասավանդողների գնահատման գործիքները վերանայվել են (**Հավելված 1**):

Սեպտեմբեր ամսվա վերջին իրականացվել է հարցում առաջին կուրսեցիների շրջանում: Համաձայն հարցման արդյունքների՝ սովորողների 67%-ը Երևանից է, 67%-ը հաստատության մասին տեղեկացել է ծանոթներից, միայն 6 %-ը՝ սոցիալական էջերից, 36 %-ը ակնկալում է ուսման ավարտին աշխատանք ունենալ մասնագիտությամբ, 90 %-ը բավարարված է ուսումնառության համար անհրաժեշտ պայմաններից, 85 %-ը՝ նորարարական տեխնոլոգիաներից, 75 %-ը՝ մասնագիտական գրականությունից, 56 %-ը՝ լսարանային կահավորվածությունից: Ընդհանուր առմամբ, առաջին կուրսեցիների 82 %-ի սպասումներն արդարացված են (**Հավելված 2**):

Դեկտեմբեր ամսին իրականացվել է կրթության որակի գնահատում 2-րդ կուրսեցիների շրջանում: Ընդհանուր առմամբ ուսանողները լիովին գոհ կամ բավարարված են հաստատությունում առաջարկվող կրթական ծառայություններից, պայմաններից: Նրանց տեսանկյունից մտահոգիչ է շաբաթական ժամային բեռնվածությունը: Ուսումնառողները մտահոգություն ունեն նաև ձեռք բերված հմտությունների մասով: Կատարվել է նաև Կրթության որակի գնահատման արդյունքների վերջին 3 տարիների համեմատություն (**Հավելված 3, 4**):

Իրականացվել է «Կարողությունների հզորացում» փորձարարական ծրագրի գնահատում Վարսահարդար Հ-2 կուրսի շահառու ուսանողների շրջանում (**Հավելված 5**): Ելնելով ուսանողների կատարած գնահատման արդյունքներից՝ կարելի է մասնագիտական ֆրանսերենի տիրապետման տեսանկյունից ծրագիրը համարել հաջողված: Փորձի տարածումը այլ մասնագիտությունների ուսանողների շրջանում խրախուսվում է: Ինչպես նաև SWOT վերլուծություն են իրականացրել շահառու դասավանդողները: Վարսահարդար-արտուսվարպետների կարծիքով սա ոլորտում տարբերվելու և փոխանակումների մեծ հնարավորություն է: Որպես թույլ կողմ նրանք նշում են իրենց կողմից մասնագիտական ֆրանսերենին ոչ լիարժեք տիրապետումը, իսկ վտանգների շարքում առանձնացնում են

ֆինանսավորման բացակայության պատճառով ծրագրի չիրականանալը: Վերջիններս առաջարկում են հնարավորության դեպքում փորձը կիրառել առաջին կուրսից սկսած (**Հավելված 6**):

Իրականացվել է «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտական ծրագրի մշտադիտարկում, որի նպատակով ՈԱՊ կողմից կատարվել է հարցում նույն մասնագիտության ուսանողների շրջանում: Հիմնադրամում սովորում է այս մասնագիտության գծով 19 ուսանող: Հարցմանը մասնակցել են 18-ը: Համաձայն արդյունքների՝ այս մասնագիտության ուսանողները ընդհանուր առմամբ գոհ են հաստատությունում իրականացվող ծրագրից: Ուսանողները մտահոգիչ են համարում մասնագիտական խնդիրներ լուծելու և կազմակերպչական ունակությունների ձևավորման հարցը (**Հավելված 7**): SWOT վերլուծություն է իրականացվել «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության գծով պատասխանատու Ե. Մարությանը (**Հավելված 8**) և ՍԵՊՌ կամպուսի ֆրանսիացի գործընկեր Ժան-Ֆրանսուա Ժուլիան (**Հավելված 9**):

Իրականացվել է առցանց հարցում «Ատամնատեխնիկական գործ», «Կարի արտադրության տեխնոլոգիա» և «Խոհարարական գործ» մասնագիտությունների շրջանավարտների և գործատուների շրջանում Արձագանք գործատու Արձագանք շրջանավարտ:

Թեև աշխատանքային պլանով նախատեսված չէր իրականացնել պրակտիկայի գնահատում, սակայն, աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2-րդ կիսամյակում կազմվել է հարցաշար, և արտադրական պրակտիկայի ավարտին իրականացվել է հարցում ուսանողների շրջանում՝ պարզելու վերջիններիս բավարարվածությունը պրակտիկայի կազմակերպումից և գործատուների վերաբերմունքից: Ելնելով վերոնշյալ հարցման արդյունքներից՝ կարելի է ենթադրել, որ արտադրական պրակտիկայի կազմակերպումը գնահատել բավարար (**Հավելված 10**):

Աշխատանքային պլանով չնախատեսված, սակայն, գործունեության ընթացքում ծագած անհրաժեշտությունից ելնելով, կատարվել է 2022-2023 ուստարում իրականացված կարճաժամկետ դասընթացների գնահատում: Գնահատման արդյունքները գոհացուցիչ են, թեև որոշ առաջարկներ հարկ է հաջորդիվ ընդունել ի գիտություն (**Հավելված 11**):

Հանդիպումներ են իրականացվել «Խոհարարական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների պետական ավարտական ամփոփիչ ստուգման հանձնաժողովի նախագահների հետ, որոնց ընթացքում քննարկվել են քննության գնահատման չափանիշները, վեր են հանվել խնդիրները, կատարվել են առաջարկներ հաջորդիվ նոր մոտեցումներ կիրառելու և քննության կազմակերպման ու գնահատման որակը բարելավելու նպատակով:

Իրականացվել է դասավանդողների տարեկան գնահատում ղեկավար կազմի և ուսանողների կողմից (**Հավելված 12**): Տարեկան գնահատականն իրենից ներկայացրել է 2 գնահատումների միասնական նիշը: Գնահատման արդյունքում 3 դասավանդողներ արժանացել են խրախուսանքի:

Ուստարվա ընթացքում աշխատանք է տարվել Կարիերայի կենտրոնի պատասխանատուի հետ ուսանողների փափուկ հմտությունների ձևավորման և աշխատաշուկա մուտք գործելուն պատրաստելու նպատակով:

ՈԱՊ-ը ուստարվա ընթացքում համագործակցել է որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի անդամների հետ, մասնավորապես հարցումների իրականացման մասով: Հարկ է նշել, որ ուսանողների կողմից նախաձեռնողականությունը որակի ապահովման գործընթացում դեռ պասիվ է:

Ուստարվա ընթացքում հաստատությունը պատրաստվել է հավատարմագրման գործընթացին, որի նպատակով կազմվել է աշխատանքային խումբ: Հավատարմագրման դիմում-հայտի ընդունումից անմիջապես հետո աշխատանքային խումբն իրականացրել է Հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն: Աշխատանքները համակարգվել են ՈԱՊ-ի կողմից: Մայիսի 25-ին ինքնավերլուծությունը ներկայացվել է ՈԱԱԿ: Փորձագիտական խմբի կազմի հաստատումից հետո սպասվում է փորձագետների այց հաստատություն:

Կազմող՝ ---------- Ա. Դաբաղյան

21.06.2023թ

Հավելված 1


Դասավանդողների բավարարվածությունն իրենց աշխատանքից
2022-2023 ուստարի
25
20
15
10
5
0
11 6 1 2
18 2 0 0
20 0 0 0
14 5 0 1
11 7 1 1
10 9 1 0
13 6 0 1
19 1 0 0
17 2 0 0
6 12 0 3
14 4 2 0
Բավարարված եմ իմ աշխատանքով
Կան անհրաժեշտ աշխ. Պայմանները
Գոհ եմ անմիջական ղեկավարիս աջակցությունից
Գոհ եմ թիմային աշխատանքից
Ունեմ առջևնթացի հնարավորություններ
Տեղյակ եմ հաստատությունում կատարվող...
Գնահատված եմ ըստ արժանվույն
Ազատ արտահայտում եմ կարծիքս
Հաստատությունում կատարվում են արդյունավետ...
Ես մասնակից եմ այդ փոփոխություններին
Դասավանդողներն ունեն հավասար հնարավորություններ
Համամիտ եմ
Մասամբ համամիտ եմ
Համամիտ չեմ
Դժվարանում եմ պատասխանել

Հավելված 2

ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Բաշխվածությունն ըստ մարզերի



2. Տեղեկատվության աղբյուրները



3. Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնն ընտրելու շարժառիթը



4. Ակնկալիքներն ուսումնառության ավարտին



5. Հաստատության մատուցած ծառայությունների առավելությունները



6. Ուսումնառության համար անհրաժեշտ պայմանների առկայություն



7. Նորարարական տեխնոլոգիաների առկայություն



8. Անհրաժեշտ մասնագիտական գրականության առկայություն



9. Լսարանային կահավորվածության գնահատումը



10. Սպասումների արդարացվածությունը ընդունելությունից հետո



Հավելված 3



Թիրախային խումբ՝ «Ատամնատեխնիկական գործ», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Խոհարարական գործ», «Հրուշակեղենի գործ» մասնագիտությունների գծով 2-րդ կուրսի ուսանողներ

Հարցված ուսանողների թիվը՝ 51

Արված ընդհանուր առաջարկներ՝ բուֆետ, մարզադահլիճ, նոր հանդերձարաններ, անհատական պահարաններ, հրուշակագործության առանձին լաբորատորիա, առանձին գրադարան, մասնագիտական ժամերի ավելացում, գործնական պարապմունքներին հատկացված ժամաքանակի ավելացում, ֆրանսերենի դասաժամերի ավելացում

Հավելված 4

Կրթության որակի գնահատում

Մասնակիցների թիվը	Բավարարվածությունը կայքում զետեղված տեղեկատվությունից	Բավարարվածությունը ընդունելության կազմակերպումից	Բավարարվածությունը շաբ.աթոռական ժամարաշխումից	Բավարարվածությունը դասավանդողների կողմից դասի վարումից	Բավարարվածությունը ուսումնական նյութերից	Բավարարվածությունը դասագրքերի տրամադրումից	Բավարարվածությունը նյութերի և գործիքների տրամադրումից	Բավարարվածությունը կահավորվածությունից	Բավարարվածությունը գրադարանից, միջոցառումներից	Ընդհանուր գնահատում
25	61%	90%	62%	90%	95%	87%	95%	87%	75%	100%
28	58%	94%	82%	100%	95%	92,5%	83%	98%	85%	94%
51	80%	90%	57%	92%	98%	88%	88%	80%	69%	94%

(Համեմատություն 3 տարվա կտրվածքով/ 2020-2021, 2021-2022, 2022-2023)

* Արդյունքներն ամփոփելիս հաշվի են առնվել Բավարար և Լիովին բավարար նշումներով պատասխանները:

Հավելված 5

Վերլուծություն

«Կարողությունների հզորացում» ծրագրի գնահատման արդյունքների



Գնահատմանը մասնակցել են ծրագրի շահառու 12 ուսանողներից 7-ը:

Գնահատման արդյունքներից պարզ է դառնում, որ ուսանողները բավարարված են դասընթացից:

Գնահատման թերթիկը ներառում է նաև ծրագրում փոփոխություններ իրականացնելու առաջարկներ բաժին, որտեղ ուսանողներն առաջարկում են ավելի շատ դասաժամեր հատկացնել շաբաթական կտրվածքով, դասընթացի ընթացքում այցելություններ կատարել վարսահարդարման սրահներ, ավելացնել ունկնդրման դասերը և տեսանյութերի դիտումները, լսարանային դասերի ընթացքում կիրառել խաղային մեթոդներ, առցանց հանդիպումներ կազմակերպել ՍԵՊՌ-ի վարսահարդար-ուսանողների և դասավանդողների հետ, յուրաքանչյուր 2-3 թեմայի ուսումնասիրությունից հետո կազմակերպել քննություն:

Հավելված 6

SWOT վերլուծություն	
Ներկայացնել «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորություններն ու ռիսկերը :	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Լավ ուսումնական բազա	Գործարարների ոչ ճանաչողական մոտեցումը
Պատանեաց գիտելիքների բարձր ցուցանիշ	ուսումնական պրակտիկայի հնար կազմակերպում:
Լավ բարոյահոգեբանական մթնոլորտ	
Քաղաքական միջազգային պարտադրանք	
Քաղաքական մասնակցություն	
Հնարավորություններ	Ռիսկեր
Գրադիչ գիտակցական հնարավորություններ	Դիմորդների օտարման թիվ ուն ֆինանսական
	արտաքին: Ֆինանսական ճգնաժամ:

Բարելավման առաջարկներ

Պետքերբարար աշխատանքների լուծման գործարարների թիվ:

Հավելված 7

Վերլուծություն

«Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության ծրագրի վերաբերյալ ուսանողների շրջանում իրականացված հարցման

արդյունքների

2022-2023 ուստարի

Համաձայն Հիմնադրամի ՈՊ աշխատանքային պլանի ուստարվա ընթացքում նախատեսված էր «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության մշտադիտարկում: Այդ նպատակով իրականացվել են դասալսումներ Հրուշակ-Հ-1 կուրսում, կատարվել է հարցում վերոնշյալ մասնագիտության ուսանողների շրջանում, ինչպես նաև SWOT վերլուծություն է իրականացվել դասավանդողների և Ֆրանսիայի գործընկեր կազմակերպության մասնագետի կողմից (վերլուծությունները կցված են): Հարկ է նշել, որ նախապես պլանավորված էր մշտադիտարկման խմբում ներգրավել Մարտեն Լատեին, սակայն, օբյեկտիվ պատճառներով, վերջինիս փոխարինել է Ժան-Ֆրանսուա Ժուլիան:

Ուսանողների շրջանում կատարված հարցմանը մասնակցել է «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության ընդհանուր թվով 19 ուսանողներից 18-ը: Նախապես ՈՊ կողմից կազմվել է 10 հարցից բաղկացած հարցաշար՝ ընտրովի պատասխաններով (այո՝□, ոչ՝□, մասամբ՝□): Համապատասխան դաշտում ուսանողները հնարավորություն ունեին կատարելու բարելավման առաջարկներ, թեև այս մասով դեռ աշխատանքներ տանելու, քանի որ ուսանողների կողմից մեծ պասիվություն է նկատվում առաջարկներ անելու և կարծիքներ հայտնելու առումով:

Այնուամենայնիվ, ուսանողները կատարել որոշակի առաջարկներ, այն է՝

- տարվա կտրվածքով պատրաստել իրենց նախընտրած բաղադրատոմսը,
- կատարել կրկնություններ ամրապնդման նպատակով,
- հաճախակի այցեր կատարել մասնագիտական միջավայր,
- անհատական դարակներ տրամադրել ուսանողներին

Հարցման արդյունքները հետևյալն են՝



Ելնելով հարցման արդյունքներից՝ նպատակահարմար է վերանայել ուսանողներին տրվող հանձնարարությունները, մասնավորապես, ներառել իրավիճակային խնդիրներ՝ մասնագիտական խնդիրներ լուծելու ունակությունը զարգացնելու նպատակով:

Ինչպես նաև գնահատում իրականացնելիս կարևոր է նախապես ուսանողներին ներկայացնել գնահատման մեթոդը, իսկ վերջում պարզաբանել ստացած գնահատականը:

Հնարավորության դեպքում կարևոր է նախապես ուսանողների հետ քննարկել ուսումնական պրակտիկայի թեմատիկան՝ թեմաների ընտրությունը մեկնաբանելու, ինչու չէ նաև ուսանողների կարծիքը հաշվի առնելու նպատակով:

Ուսանողների մոտ կազմակերպչական ունակությունները զարգացնելու նպատակով կարևոր է թիմային և անհատական մրցույթների խմբային աշխատանքների կազմակերպումը, հետազոտական աշխատանքների իրականացումը: Իսկ այդ ունակությունը ստուգելու համար կարելի է քննությունների գնահատման չափանիշներում ներառել որոշակի փափուկ հմտությունների ստուգումը:

Հավելված 8

Analyse-SWOT SWOT վերլուծություն	
Côtés forts/Ուժեղ կողմեր	***Côtés faibles/Թույլ կողմեր***
Nouveau laboratoire avec tout l'équipement moderne Ժամանակակից սարքերով հագեցած նոր լաբորատորիա	Une seule recette réalisé durant un cours pratique 1 գործնական պարապմունքի ժամանակ 1 բաղադրատոմսի պատրաստում
Մոտիվացված դասավանդողներ Enseignants motivés	Absence de stockage des produits Մթերքների պահեստավորման բացակայություն
	Nécessité de consacrer beaucoup de temps à la maîtrise de nouveaux équipements Նոր սարքավորումներին տիրապետելու համար երկար ժամանակ հատկացնելու անհրաժեշտություն
Opportunités/Հնարավորություններ	***Risques/Վտանգներ***
Patrimoine riche qui aidera à restituer les anciennes recettes arméniennes Հարուստ ժառանգություն, որը թույլ կտա վերականգնել հին հայկական բաղադրատոմսերը	Guerre Պատերազմ
Formations Վերապատրաստումներ	Financement Ֆինանսավորում

Propositions/Առաջարկներ

- Préparer au moins deux recettes durant un cours pratique
  1 գործնական պարապմունքի ժամանակ առնվազն 2 բաղադրատոմսի պատրաստում
- Préparer plus d'une recettes lors des examens
  Քննությունների ընթացքում պատրաստել 1-ից ավել բաղադրատոմսեր
- Utiliser les fruis et les baies d'Arménie lors de la réalisation ds recettes
  Օգտագործել հայկական մրգեր և հատապտուղներ
- Avoir toujours un stockage de produits
  Միշտ ունենալ պահեստավորված մթերքներ

Préparé par Jean-François Julliat

Հավելված 9

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	*Թույլ կողմեր*
Նոր ուսումնական լաբորատորիա	Գործատուների ոչ լուրջ մոտեցումը ուսումնական գործընթացին, մասնավորապես պրակտիկաների անցկացման մասով
Նոր մասնագիտական ձեռնարկ	
Նոր բաղադրատոմսերի գիրք	
Շարունակական վերապատրաստումներ	
Շարունակական վարպետաց դասեր	
Opportunités/Հնարավորություններ	*Risques/Վտանգներ*
Փորձի փոխանակման հնարավորություն	Ֆինանսավորման նվազում
	Դիմորդների անվճարունակություն

Առաջարկ՝ ինտենսիվացնել աշխատանքը գործատուների հետ

Կազմող՝ Ե. Մարության

Հավելված 10

Վերլուծություն

2022-2023 ուստարվա արտադրական պրակտիկայից ուսանողների բավարարվածության վերաբերյալ իրականացված հարցման արդյունքների

Ուսանողների արտադրական պրակտիկան կազմակերպվում է համապատասխան մասնագիտական կրթության չափորոշիչներին: Արտադրական պրակտիկայի կազմակերպումն իրականացնում են Հիմնադրամի արտուսվարպետները և մասնագիտությունների գծով պատասխանատուները: Արտադրական պրակտիկայի իրականացումը հնարավորություն է տալիս ձեռք բերել գործնական նոր հմտություններ, որոնք ուսանողը համադրում է իր ունեցած գիտելիքների և հմտությունների հետ՝ ավելի հստակ պատկեր ստանալով իր մասնագիտության մասին և ապագա աշխատանքի վերաբերյալ:

Յուրաքանչյուր տարի Հիմնադրամի կողմից հաստատվում են պրակտիկայի օրագրերը՝ ելնելով մասնագիտական կրթական ծրագրի առանձնահատկությունից:

Արտադրական պրակտիկայից ուսանողների գոհունակությունը պարզելու նպատակով պրակտիկայի վերաբերյալ ուսանողները փոքրիկ հաշվետվություն գրելու հնարավորություն ունեն: Ներկայացված հաշվետվությունները ամբողջովին չեն արտացոլում օբյեկտիվ պատկերը : Ուստի, Հիմնադրամի որակի ապահովման պատասխանատուն իրականացրել է հարցում պրակտիկանտների շրջանում՝ վերջիններիս գոհունակության աստիճանը պարզելու նպատակով:

Հարցաթերթիկը պարունակում էր 6 հարց՝ ընտրովի պատասխաններով (☐ այո, ☐ ոչ, ☐ մասամբ) և պրակտիկայի կազմակերպման բարելավման առաջարկների համար հատկացված մաս:

Հարցմանը մասնակցել է հիմնական կրթության հիմքով 57 պրակտիկանտ (2-րդ և 3-րդ կուրսեր), կամ արտադրական պրակտիկա անցած ուսանողների 85%-ը:

Արդյունքները հետևյալն են՝



Բարելավման առաջարկներ կատարելու հատվածում գրառումները քիչ են: Ուսանողները հիմնականում խոսում են արտադրական պրակտիկային ավելի երկար ժամանակ հատկացնելու մասին, ինչը հնարավոր կդառնա ավելի ուշ դուալ կրթության ծրագիր իրականացնելու պարագայում: Որոշ ուսանողներ նշել են, որ կցանկանային ավելի բազմաբնույթ և լուրջ առաջադրանքներ իրենց վստահվեին: «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության մի քանի ուսանողներ էլ գործատուի կողմից անլուրջ մոտեցում են նկատել:

Ելնելով վերոնշյալ տվյալներից՝ կարելի է ենթադրել, որ արտադրական պրակտիկան ընդհանուր առմամբ լավ էր կազմակերպված:

Հաշվի առնելով արդյունքներն ու ուսանողների առաջարկները՝ առաջարկում եմ պրակտիկայի վայրերի ընտրությունն իրականացնելիս

- հաշվի առնել ուսանողների կարծիքները,
- հաշվի առնել տվյալ կազմակերպության հնարավորությունները,
- պրակտիկայի թեմատիկ պլանները նախապես համաձայնեցնել գործատուի հետ,
- մշտական կապ պահպանել պրակտիկայի մեթոդական ղեկավարի և պրակտիկայի անմիջական ղեկավարի միջև՝ պրակտիկայի ընթացքը վերահսկելու նպատակով,
- մանրամասն աշխատանք տանել գործատուների հետ՝ պրակտիկայի գնահատման չափանիշները հստակեցնելու և անաչառ գնահատում իրականացնելու նպատակով,
- աշխատանք տանել գործատուի հետ պրակտիկայի վայրում հստակ ապահովելու համար կրթության ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքների կապը

գործնական հմտությունների հետ՝ դրանց կարևորությունը ակներև դարձնելու նպատակով,

- աշխատանք տանել գործատուների հետ՝պրակտիկայի կազմակերպման հանդեպ պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով,
- աշխատող շրջանավարտների հետ կապի միջոցով փորձել վերհանել պրակտիկայի ժամանակ ունեցած բացթողումները հետագա բարելավումներ իրականացնելու նպատակով:
- բացի արտադրական ուսուցման վարպետներից ընդգրկել ևս մեկ պատասխանատու պրակտիկայի կազմակերպման, մշտադիտարկման և գնահատման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հավելված 11

Վերլուծություն

2022-2023 ուստարում իրականացված կարճաժամկետ դասընթացների գնահատման արդյունքների

2022 թվականին Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում իրականացվել են հետևյալ կարճաժամկետ ծրագրերը.

- Լուսանկարչություն
- Հրուշակեղենի պատրաստման հմտությունների և կարողությունների զարգացում
- Ռուսաց լեզու (հեռավար)
- Կարուձևի կարողությունների և հմտությունների զարգացում
- Վարսավիրական գործի հմտությունների և կարողությունների տիրապետում
- Ռեստորանային ծառայության կազմակերպում և մատուցում
- Դասընթացների ավարտին իրականացվել է ծրագրերի գնահատում շահառուների կողմից (բացառությամբ «Ռեստորանային ծառայության կազմակերպում և մատուցում» դասընթացի): Գնահատումն իրականացնելու նպատակն է ստուգել դասընթացի կազմակերպման արդյունավետությունն ու մշակել բարելավման մեխանիզմներ:

Գնահատումն իրականացվել է անանուն, միավորային եղանակով (5 բալանոց սանդղակ):

Գնահատվել են դասընթացի բովանդակությունը, տևողությունը, տրամադրված նյութերն ու գործիքները, գրականությունը, դասընթացավարի մոտեցումը, հմտությունները, ընտրված մեթոդները և դասընթացից ունեցած ակնկալիքների համապատասխանությունը դասընթացի արդյունքներին:

Դասընթացի բովանդակությունը, տրամադրված գրականությունը, նյութերն ու գործիքները, դասընթացավարի հմտությունները, մոտեցումները, ընտրված մեթոդները, դասընթացից ունեցած ակնկալիքների համապատասխանությունը դասընթացի արդյունքներին բոլոր շահառուները գնահատել են գերազանց (5): Բացառություն են կազմում Կարուձևի կարողությունների և հմտությունների զարգացման դասընթացի 3 շահառուներ, որոնցից 2-ը տրամադրված նյութերն ու գործիքները գնահատել են 4, 1-ը, 1 շահառու դասընթացի բովանդակությունը գնահատել է 3 միավոր: Նույն դասընթացի 1 շահառու էլ 3 միավոր է գնահատել դասընթացից ունեցած ակնկալիքների համապատասխանությունը դասընթացի արդյունքներին:

Հրուշակեղենի պատրաստման հմտությունների և կարողությունների զարգացման դասընթացի 1 շահառու դասընթացից ունեցած ակնկալիքների համապատասխանությունը դասընթացի արդյունքներին գնահատել է 4:

Ինչ վերաբերում է դասընթացի տևողությանը, գրեթե բոլոր շահառուներն այն գնահատել են 4:

Առաջարկություններ բաժնում կատարված գրառումներից պարզ է դառնում, որ շահառուները նախընտրում են դասընթացին հատկացված ավելի երկար ժամանակահատված: Լուսանկարչության դասընթացի 1 շահառու կարևոր է համարում բնության մեջ իրականացվող լուսանկարումների ներառումը դասընթացի բովանդակության մեջ:

Կարուձևի կարողությունների և հմտությունների զարգացման դասընթացի 1 շահառու առաջարկում է ուսումնառողներին թողնել կարված հագուստներից մի քանիսը:

Իրականացված գնահատման ձևաչափը ընդհանուր առմամբ բավարար է, սակայն հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ շահառուները խուսափում են երկար գրառումներ կատարել :

Առաջարկվում է հետագա ծրագրերի կազմման համար ուշադրություն դարձնել դասընթացի ժամանակային հատկացմանը և ի գիտություն ընդունել շահառուներին որևէ հուշ սեփական աշխատանքներից թողնելու ցանկությունը, ինչպես նաև Լուսանկարչության դասընթացի ծրագրով նախատեսել բնության գրկում կատարվող լուսանկարումներ:

Հավելված 12

ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հանրակարթական առարկաների դասախոսներ

	Ազգանուն, անուն	**Միավոր** (առավելագույն միավորը՝40)
1	Բաղյան Ամալիա	36
2	Ստեփանյան Անուշ	35,9
3	Մաշուրյան Նազիկ	34,5
4	Հայրապետյան Լիլիթ	28
5	Ասատրյան Աննա	34,6
6	Միքայելյան Լալա	30,5
7	Կարապետյան Արաքսյա	30
8	Խանոյան Արիմա	33,7
9	Համբարձումյան Ելենա	29
10	Ցավրոյան Լուսինե	38,9
11	Կզլյան Գոհար	32,9
12	Ավետիսյան Նելլի	34,6

Մասնագիտական մոդուլների դասավանդողներ

	Ազգանուն, անուն	**Միավոր** (առավելագույն միավորը՝40)
1	Այդինյան Սամվել	38,3
2	Պապյան Լիլիթ	38,2
3	Սարգսյան Էրիկ	39,8
4	Ոսկանյան Սոնա	33,5
5	Վարդանյան Քնարիկ	37,5
6	Փոլադյան Գոհար	37,5
7	Գրիգորյան Արուսյակ	37,8
8	Մարության Ելենա	38,2
9	Վելիցյան Ռոզա	34,8
10	Քոչարյան Էմմա	35,6

Վերոնշյալ գնահատումն իրականացվել է «Խոհարարական գործ», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» և

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների 3-րդ կուրսի ուսանողների կողմից անանուն եղանակով: Գնահատման համար առանձնացվել է 8 չափանիշ, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված է առավելագույնը 5 միավոր: Ստորև բերված աղյուսակում երևում են սահմանված չափանիշները:

Կառավարում է լսարանը
Օբյեկտիվ է գնահատում
Ներգրավում է լսարանը դասի մեջ
Դասին կիրառում է հետաքրքիր մեթոդներ
Բացատրությունը զուգորդվում է ուսումնառության նյութերով
Հաճախ է կիրառում համակարգչային տեխնոլոգիաները
Միշտ բացատրում է մատուցվող նյութի կապը այլ առարկաների հետ
Հարգալից է ուսանողների նկատմամբ

Ի տարբերություն 2020-2021 ուստարվա ընթացքում իրականացված գնահատման՝ 2022-2023-ին իրականացված գնահատումն ավելի լավ էր կազմակերպված, չափանիշներն ավելի հստակ էին ձևակերպված: Ուսանողներն ավելի պատասխանատու կերպով էին մոտեցել գնահատմանը՝ շնորհիվ նախապես տարված բացատրական աշխատանքի:

Այս ձևով կատարված գնահատումն ավելի օբյեկտիվ պատկեր է ապահովում: